


ԱՅՍԵՐ - 920. 11. 1



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԹԱԹԵՐԹ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԵՐԵԱՆ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ


Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 11

1 ՄԱՅԻՍ 1290

ԳԻՆ 100 ՓՐ .



Յ. ԴՎԱՆՅԱՆ



Մ. ԿԻՐՃԵԱՆ



Լ. ԱԿԻՅԱԶԵ



Ա. ՉԱՐԴԱՐԵԱՆ



ՎԱՐԴԱՆ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆ ԶՈՀԵՐԷՆ, ՄԵԾ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԷՆ

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքներ՝ պէտք չէ քաշել տար
ձեր փոքրիկներուն ակռաները, այդ կեր-
պով կզակի ձեռափոխութիւն յառաջ
կուգայ: Դիմեցէք Ատամնաբոյժ

ՏՈՔԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ երկար ժամա-
նակ, մասնաւորապէս զբաղած է նաեւ
տղոց կաթի ակռաներու դարմանումի
ուսումնասիրութեամբ եւ ատով մասնա-
գիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի Ճամիի
սանդուխներուն դէմ: Թիւ 61:

ՆՈՐ ՀԱԳՈՒՍՏ. — Պզտիկներ՝ 250
դրուշով նոր եւ ճաշակաւոր ամառնա-
լին հագուստ ունենալու համար ծնողք-
նիդ առաջնորդեցէ՛ք Զաքարիայի,
Մեծ Նոր խան, Բ. յարկը, Կ. Յ. Թուխ-
տարեան ընկերութեան վաճառատունը:

Տղոց հագուստի վաճառատուն

ՄԻԶՐԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Եւրոպական ձեւով ճաշակաւոր, դիմաց-
կուն եւ աժան հագուստ ունենալու հա-
մար տղա՛ս, ծնողքդ առաջնորդէ Մեծ
Շուկայ, Իսկէնտէր Պողազըի դրան ուղ-
ղութեան վրայ, Ֆէրահէճիլէր փողոց,
Թիւ 1:

Փ Ա Ս Տ Ա Բ Ա Ն

ՃԷՔԷՐԵԱՆ

Զաքարիայի, Սեպուհեան խան, Թ. 40

ՏՔԹ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Մ Ա Ս Ն Ա Գ Է Տ

ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պայազիտ, Մաքսսնըլար, Թիւ 5

ԿՈՊԵՌՆԻԿ ԽԱՉԱՍՏՈՒՐԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1900 ԻՆ

Կեդրոն Պահնե Գաբու: Մէյվախօս Խան—Հեռագայն Սթամպուլ 319

ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

ՏՔԹ. ԵԴ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ

ՏՔԹ. Կ. ՔԷՐԷՍՏԷՃԵԱՆ

ներքին եւ մորթային հիւանդութեանց
Պոլիս, նոր նամակատան կից Նիւզհէթ
Զիա դեղարանին վերնայարկը:

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ԵՒ

ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆՑ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՍԱՀԱԿ ՍՎԱՃԵԱՆ

Մեծ ՇՈՒԿԱՅ ՔԱԼՓԱՔՃԻՆԵՐՈՒ
ՃԱՏՏԷՆ ՔԻՒՐՔՃԻՆԵՐՈՒ ԴՐԱՆ
ՃԻՇՏ ԴԻՄԱՅ ԹԻԻ 2

ԱԶՔԸ ԼՈՅՍ

Իրենց առողջութեան
նախանձախնդիր անձերուն

ՏՔԹ. ՄԱՐՏԻԿ Յ. ՐԷԻՍԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ի դիւրութիւն իր յարգոյ յաճախորդնե-
րուն եւ համակիրներուն փոխադրուած է
Պոլիս, նոր նամակատան դէմ, Վլօրա
խան, Թիւ 18, ուր գիտական ամենա-
վերջին նորութեամբ կը դարմանէ բերնի
եւ ակռաներու հիւանդութիւններ. կը
շինէ երաշխաւորեալ տոկունութեամբ եւ
նրբաճաշակ ատամնաշարեր, զուրօններ,
պուխներ եւ բիփօներ:

ԿԱՏԱՐԵԱԼ ՃՇԴՍ.ՊԱՀՈՒԹԻԻՆ

ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

Ամեն Հայ պէտք է ունենայ

ԱՄԲՈՂԶԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ք Ա Ր Տ Է Ս Ը

Գունաւոր, մեծադիր, մանրամասն
ԳԻՆ 30 ԴՐՇ.

Դիմել Պապը Ալի ճատտէսի, Ատա-
տուրեան տպարան, Յ. Դարբինեանի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մ Ա Յ Ի Ս Մ Է Կ

Փոքրիկ բարեկամս՝ րս,

Գիտէ՞ք թէ ինչո՞ւ իբրեւ վերնագիր ընտրած եմ վերի թուականը : Կրնայ ըլլալ որ ձեզմէ ոմանք գիտեն անոր նշանակութիւնը, իսկ ուրիշներ՝ ոչ : Գիտցողներն ալ հաւանաբար աւելի լիակատար ծանօթութիւն մը հունին այդ թուականի մասին, որ այսօր գրեթէ տօնի մը հանգամանքը ունի միջազգային ընկերվարութեան համար :

Բայց կարծեմ նախ հասկնալ պիտի ուզէիք թէ ի՞նչ է ընկերվարութիւնը, թէ որո՞նք են ընկերվարական կոչուած մարդերու ջատագոված և կիրարկելի փորձած սկզբունքները :

Նախ ըսեմ ձեզի թէ այս ինդիրը առ այժմ ձեր հասկացողութենէն բարձր կարգ մը կէտեր ունի. բայց այդ պատճառ մը չէ որ դուք ալ չսորվիք այդ մասին : Արդէն բարձրագոյն կամ երկրորդական վարժարաններու մէջ պիտի սորվիք ընկերային այս մեծ հարցը : Անտարակոյս կրօնքներ, գիտութիւններ, ընկերային սկզբունքներ և ճարտարարուեստներ կը հետապնդեն մէկ նպատակ. այդ ալ արդար ու կանոնաւոր ընկերային վիճակ մը ստեղծելէ մարդերու համար, ծառայելով անոնց երջանկութեան : Տարակոյս չկայ թէ այս մեծ նպատակ մըն է, ու շատ կենսական կարեւորութիւն ունի աշխարհի բոլոր մարդերուն համար : Մեծ ու պզտիկ, բոլորս ալ կը շահագրգռուինք ասով : Բայց թէ ի՞նչ միջոցներով, ի՞նչ ճամբաներով պիտի կրնանք հասնիլ այդ մեծ նպատակին իրագործման, ահա հո՞ղ է որ զաղափարները կը տարբերին :


Նախ պէտք է ընդունինք թէ կրօնքներ, ընկերային սկզբունքներ, գիտութիւններ, ճարտարարուեստներ, ասոնք բոլորն ալ իրենց բաժինը ունին մարդկային երջանկութիւնը և բարօրութիւնը, մարդկութեան արդարութեամբ և խաղաղութեամբ կառավարուելու և ապրելու մեծ նպատակը ապահովելու գործին մէջ : Բայց նոյն ատեն անուրանալի է է որ ընկերային կարգ մը սկզբունքներու կիրարկումը կրնայ աւելի արդար ու երջանիկ կեանք ու կենցաղ մը ապահովել մարդերու համար : Ահա հոս է որ ընկերվարութիւն կոչուած ընկերային գիտութիւնը յառաջ կ'անցնի ու կ'ըսէ թէ իր գտած ու յանձնարարած սկզբունքներն ու կերպերը ա՛լ աւելի կը ծառայեն աշխարհի բարօրութեան ու երջանկութեան :

Կրօնքներէ զատ, որոնք ներքնապէս մարդոց հոգիներուն և սիրտերուն վրայ ազդելով կ'ուզեն մարդիկը բարի ու երջանիկ ընել, կառավարութիւններն ալ, օրէնքներու անոնց բարւոք կիրառութեան, ընկե-

բային արդար սկզբունքներու գործադրութեան հսկելով կ'ուզեն նոյն նպատակը հետապնդել : Աշխարհիս վրայ կան հարուստն ու աղքատը , գործատէրն ու գործաւորը , դրամատէրն ու աշխատաւորը , հասառուն և բանւորը , կառավարողն ու կառավարուողը : Ուրեմն ասոնց փոխ-յարաբերութիւնները ճշդելու , զանոնք արդարութեամբ իրարու հետ հաշտ ու երջանիկ ապրեցնելու համար ի՞նչ միջոցներ կան : Որովհետեւ , չմոռնանք որ , այս դասակարգերուն երկուքն ալ մէկզմէկու պէտք ունին , երկուքն ալ իրարու կապուած են : Զոր օրինակ , մինակ աշխատանքը ինքնաբաւ չէ , ոչ ալ դրամագլուխը ինքնիրենը արդիւնաւոր : Ընկերավարութիւնը , որ այս խնդիրներու մասին խօսող գիտութիւնն է , որ ասոնց համար աւելի արդար ու արդիւնաւոր միջոցներ յանձնարարել կը ջանայ , կու գայ այս յարաբերութիւնները ճշդել , անոնց համար միջոցներ ապահովել և իր սկզբունքներով աւելի արդար , կանոնաւոր եւ երջանիկ մարդկային ընկերութիւն մը յառաջ բերել : Թէ ո՛րչափ յաջողած է ցարդ , թէ ապագային ի՞նչ կը յուսացուի որ կրնայ ընել , թէ ի՞նչ բարեփոխութիւններու պէտք ունեցաւ և պիտի ունենայ այս ընկերային գիտութիւնը , ասոնք խնդիրներ են , զորոնք վերջը պիտի սորվիք : Բայց ամենքս ալ կ'ընդունինք թէ աշխարհս աւելի արդար և տկարին իրաւունքները պաշտպանող օրէնքներով պէտք է կառավարուի , թէ աւելի երջանիկ ու հանգիստ պէտք են ըլլալ մարդիկ , թէ այս մասին պէտք է նոր ջանքեր թափուին : Պէտք է զրկողին , չարաչար շահագործողին , բռնատիրողին դէմ պաշտպանուին , զրկեալին , շահագործուողին , բռնադատուողին իրաւունքները :

Ես կ'ընդունիմ թէ այս մասին ճշմարիտ կրօնքն ու բարձր բարոյականութիւնը մեծ գործ ունին կատարելիք . մարդիկ պէտք է նախ հոգիով ու սիրտով , գաղափարներով ու բարոյականով բարձրանան և սոսկան անարդարութիւններէ , ու տառապին թշուառութիւն ու զրկում տեսնելէ , մանաւանդ անոնց պատճառ ըլլալէ : Բայց ընկերավարութիւնն ալ տոյս յիշուած փոխ-յարաբերութիւններուն վրայ խօսելով , միջոցներ ցոյց տալով ունի մեծ և կարեւոր գործ մը , որ անտարակոյս օգտակար պիտի ըլլայ աշխարհի բարօրութեան :

Բայց ո՞ւր մնաց «Մայիս Մէկ»ը , պիտի հարցնէք հիմա : Ահա այս օրը տօնն է միջազգային ընկերավարութեան , ընկերավարութիւնը աշխարհիս բարօրութեան համար միակ միջոց դաւանողներուն , բոլոր գործաւորներուն , բանւորական աշխարհին : Ու կը տօնուի աշխարհիս ամէն կողմերը :



Մ Ա Յ Ի Ս Մ Է Կ

Մէկն է այսօր Մայիսին,
Ծն, ընկերներ միասին
Երգենք, պարենք ժպտազին,
Մինչ կը խայտալ մեր հոգին:

Մայր - Բրնուրիւն մեզ համար՝
Պարգեւներով անհամար՝
Բացած է նոյն իր գանձեր,
Մեզ կը սպասէ անհամբեր:

Ծն, վայելենք ծառ, ծաղիկ,
Ու առօրեան զով հովիկ,
Արեւալոյսն անբաւան,
Վրնիս ջուրեր զովարար:

Միջոց, թռչուն, կենդանի՝
Կեանքսուրբեամբ մը յայնի՝

1 Մայիս 1920

Կարծես Մայիս կը տօնեն,
Ամենն իրենց տեղերեն:

Մե՛նք ալ ելլենք բաց դռներ,
Ուր ծաղիկներ են փթեր.
Գալը տօնենք Մայիսին՝
Ուրախ, զըւարթ միասին:

Ծաղիկներով գոյնգոյն
Հիւսենք պրսակ մը սիրուն՝
Պրսակելու Մայիսի
Երջանկաբեր Թագուհի:

Ծն, ընկերներ, միացե՛ք.
Այսօր տօնել «Մայիս Մէկ».
Եղբայրուրիւն, Գուր ու Սեր
Թո՛ղ հրնուեցնեն մեր սիրեր: .

ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

(Մանկական արտասանութիւն)

Սա անուշ հարսին
Ու բարի փեսին
Ինչ գովք ալ հիւսեմ՝
Քիչ կուգայ կ'ըսեմ:

Հարսն իբր արեւոյնս՝ (1)

Համակ ժրպիտ, լոյս.

Առիւծ (2) մ'է փեսան

Քաջ, ազնիւ ա՛յնեան:

Հիւրե՛ր յարգելի,
Ամենդ ալ ինձի
Չե՛ք ձայնակցիր՝ արդ
Երբ մաղթեմ զըւարթ. —

Կեանք մը երջանիկ
Ու համակ բարիք,
Անուշիկ հարսին
Ու բարի փեսին:

ԳՐ. Հ. Գ.

(1) Հարսին անունն է Արշալոյս

(2) Փեսին անունն է Լեոն.

ՓՈՔՐԻԿ ԽԱՂԱՄՈՒԸ

— 00000 —

Քաղաքին երեւելիներէն Պ. Երուանդ Սաչեանի որդին Վարդան ամէնուն սիրելին էր : Իր բարի և հեղ բնաւորութեան հետ մէկտեղ ան ունէր նաեւ սուր միտք և աշխատասիրութիւն : Ինք տարեկան հասակի մէջ էր երբ փայլուն կերպով մանկապարտէզէն շրջանաւարտ ստակուեցաւ : Սակայն նախակրթարան մտնելէն վերջ, Վարդանի վարժունքն ու ընթացքը բոլորովին փոխուեցան : Նոր դասարանի աշակերտները իրեն անծանօթ էին բայց մէկէն, իրենց դրացի Համբարձում Պապեանէ : Վարդան, վարժարանին կարգ ու կանոնին բոլորովին անտեղեակ, մեծ դժուարութիւն կը կը կրէր գասերը պատրաստելու մէջ :

Համբարձում իրմէ աւելի տարիքոտ և փորձառու էր . այս պատճառաւ Վարդան յարմար դատեց մտերմութիւն հաստատել իրեն դրացիին տղուն, անկէ կարենալ օգտուելու համար : Իրաւ ալ երկուքը անբաժան ընկերներ դարձան, թէ զբօսանքի և թէ դասի միջոցէն : Բայց Համբարձում իր նոր ընկերով պէս լուրջ և աշխատասէր չէր : Դպրոցին մէջ խաղամոլութեան տիպար մըն էր : Իր պայուսակը լեցուն էր քարեգրնադակներով :

Վարդան, հիմա Համբարձումի հետ շփման մէջ գտնուելուն, անոր բնաւորութիւնները իւրացուց անդիտակցաւար և կորսնցուց իր ազնիւ և լուրջ տղու բոլոր յատկութիւնները :

★
★

Այդ օրէն Վարդան բոլորովին փոխուած էր : Այլեւս ան հաճոյք չէր զգար դասերէն : Ուսուցիչներու կողմէ տրուած ամէն հրահանգ մեծ տաղտուկ կը պատճառէին իրեն : Յանդիմանութիւն և խրատ բնաւ չէին ազդեր իր վրայ : Ան դարձաւ քարեգնդակի սիրահար մը : Փափաք ունէր շատ, շատ շահիլ և միշտ խաղալ : Առտուն կանուխ անկողնէն կ'ելլէր, աճապարանքով մը կը հագուէր ու կը լուացուէր, բայց ո՛չ թէ իր դասերը սերտելու, այլ Համբարձումի պարտէզը վազելու և անոր հետ քարեգնդակ խաղալու համար մինչեւ վարժարանի պահը : Եթէ իրենց մնար, բնաւ չէին ուզեր դպրոցին սեմէն ներս մտնել : Ծնողքէն վախնալնուն համար էր որ որոշեալ ժամանակին դասարանը ներկայ կը գտնուէին : Հոն ալ ուսուցիչին դասերը փոխանակ մտիկ ընելու, իրենց պէս խաղամոլ տղոց հետ միեւնոյն նստարանին վրայ նստած՝ անտարբերօրէն կը խաղային և քարեգնդակներու շուկը մինչեւ իրենց դրացի գրասեղանը լսելի կ'ըլլար : Երբեմնի ուշիմ և ջանադիր Վարդանը նետուած էր հիմա այլեւս խաղին գիրկը : Իր միակ մտածումը քարեգնդակ խաղալ և շահիլ էր : Ահա՛ թէ ո՛ւր առաջնորդեցին զինքը իր չար ընկերները :

★
★

Երթալով աւելի գէշցաւ Վարդանի վիճակը : Թէեւ իր սրամտութեամբը բաւական վարպետ դարձած էր խաղին միջ, բայց իր ընկերը ա՛լ աւելի փորձառու ըլ-

չալով միշտ ինք կը տուժէր: Որ-
քան կորսնցնէր, ա՛յնքան աւելի
իր եռանդը կ'արծարծուէր: Բայց
միշտ վրայ կուտար:

* * *

Վարդանի հայրը սովորութիւն
ունէր ամէն շաբաթ օր իրեն և
քրոջը արծաթ դահեկան մը տալ,
որպէսզի իրենց փափաքած պտուղ-
ները գնեն: Քոյրը իր առած
դրամները գանձանակի մը մէջ կը
խնայէր, իսկ Վարդան իր դրամ-
ները քարեղնդակի կուտար: Ժա-
մանակ մը վերջ սակայն իր հօր-
մէն առած շաբաթական մէկ դա-
հեկանը շատ քիչ կուգար Վար-
դանին, քանի որ ամէն օր կոր-
սնցուցած քարեղնդակի ու պարտ-
քի քանակը կ'աւելնար և իր
դրամը չէր բաւեր պարտքերը
վճարելու: Մէկ քանի անգամ
քրոջմէն փոխ դրամ առաւ պարտ-
քը վճարելու: Բայց Վարդան
միշտ չէ կորսնցուցած ու չէր
կրնար իր պարտքը վերջապէս
խաղի համար վճարել: Ուստի
դրամ ճարելու օրէօր նոր միջոց-
ներու վրայ կը խորհէր: Այս ան-
գամ մտածեց խաբէութեան դի-
մել և յաջողեցաւ խաբել իր մայ-
րը թէ իրեն դրամ պէտք էր տետ-
րակներ և գրէնական պիտոյք
գնելու համար: Մայրը հինգ վեց
անգամ դրամ տալէ վերջ, այլևս
մերժեց ու և է դրամ տալ: Այս
մերժումը մեծ մտահոգութիւն
պատճառեց պատանի խաղամո-
լին, բայց այդ մտահոգութիւնը
զինքը խաղէ չհեռացուց. դարձ-
եալ շարունակեց խաղալ: Ամէն
քան զոհելու պատրաստ էր մի-
միայն խաղի այդ հաճոյքէն չզր-
կուելու համար: Տարօրինակ գա-
ղափարներ յղացաւ դրամ գտնե-
լու համար: Մայրը դրամ կը մեր-
ժէր առաւ, հայրիկէն ալ կը վախնար

դրամ ուղելու. ուստի ճարահատ
երկար վարանումներէ վերջ, ու-
րոշեց դրամ գողնալ:

* * *

Իր հայրը Պ. Երուանդ ամէն
առաւօտ շուկայ երթալու միջո-
ցին, դրամ կուտար մօրը, տնա-
կան ծախքերու համար: Վարդան
գիտէր մօրը դրամին պահած տե-
ղը: Օր մը կէսօրին, ճաշէն վերջ,
առանց մէկէ մը նշմարուելու յա-
ջողեցաւ ներքնասենեակը մտնել և
դարակը բանալով քսան դահե-
կան գողնալ: Այս գրամը Վար-
դանին համար հազիւ երկու օր-
ուան բաւեց: Իր ըրած գողութեան
մասին բնաւ խօսք չեղաւ տան
մէջ: Ուստի Վարդան գոհ մնաց
որ ո՛չ մէկը տեսած չէր իր ըրա-
ծը և թէ մայրը դրամի պակասը
նկատած չէր: Այս պարագան հա-
մարձակութիւն և քաջալերու-
թիւն տուաւ սկսնակ և պզտիկ
գողին:

Երկրորդ գողութենէ մը վերջ,
Վարդանի մայրը տեսաւ թէ իր
դրամէն քսան դահեկան պակ-
սած էր: Բայց անիկա գողու-
թեան մը մասին չէր կրնար կաս-
կած ունենալ, քանի որ բոլոր
տնեցիները, մեծէն պզտիկը, ա-
մէնքն ալ վստահելի էին: Սպա-
սուհին նշոյնիսկ ամենուն ալ վրս-
տահութիւնը չահած էր. ուստի
մայրը առեւտուրի մէջ սխալմամբ
աւելի դրամ տուած ըլլալ կար-
ծեց:

* * *

Վարդան գողութիւններուն
մէջտեղ չելլելէն քաջալերուած,
կը շարունակէր իր սկսած գոր-
ծը: Այսպէս երկու օրը անգամ
մը դրամարկղէն քսան երեսուն
դահեկան կը պակսէր: Ասոր վրայ,
մայրը սկսաւ որոշապէս կասկա-
ծիլ թէ անպատճառ տանը մէջ

գող մը կար որ գաղտագողի պըղ-
տիկ գումարներ կը տանէր :

*
* *

Իրիկուն մը, ճաշի ատեն,
մայրը պատմեց կրկնակի գողու-
թիւնները և ըսաւ թէ՛ եթէ ընո-
ղը խոստովանի իր յանցանքը,
պիտի չպատժուի և ներման պի-
տի արժանանայ : Ամէնքը միաբե-
րան բողոքեցին և իիենց անմե-
ղութիւնը յայտնեցին : Այդ օրը
ո՛չ մէկի բերնէն խոստովանու-
թիւն չելաւ :

Հայր և մայր շատ մտահոգ
էին այս գողութեան դէպքի մա-
սին : Բնականաբար իրենց զա-
ւակներէն չէին կասկածեր. սպա-
սուհին ալ թէև մինչև հիմա այդ-
պիտի արարքի մը մէջ գտնուած
չէր, բայց իբր միակ օտար անձը
ըլլալուն, կասկածի առարկայ ե-
ղաւ :

Ընթրիքէն յետոյ, մայրը ա-
ռանձին առանձին կանչեց Վար-
դանը, Նուարդը, շատ մը յոր-
դորներ տուաւ որպէսզի խոստո-
վանին, բայց երկուքն ալ ուրա-
ցան : Ուստի պատուիրեց անոնց
որ խիստ հսկողութիւն կատարեն
թէ ո՞վ կը մտնէ դրամի սենեա-
կը և անմիջապէս իրեն լուր տան :

Մասնաւորաբար մայրը միշտ
իւր դրամի դարակը բաց կը թո-
ղուր որպէսզի գողը կարելի ըլ-
լայ բռնել :

Ճիշդ պատուէրին յաջորդ առ-
տուն, մայրը մեծ զարմանքով
նկատեց թէ դարձեալ երեսուն
դահեկան գողցուած էր : Յայտնի
էր որ վարպետ ձեռք մը ամէն
օր կանոնաւորաբար դրամ կը
շորթէր : Առանց ո և է պատճա-
ռի և հետքի, ծնողքին կասկած-
ները ամենէն աւելի սպասուհի
աղջկան վրայ ծանրացան, և այս
վերջին գողութիւնը, այնքան

գէշ տպաւորութիւն գործեց Պ.
Երուանդի վրայ որ սպասուհին
ճամբել որոշեց : Պ. Երուանդ նոյն
իրիկունը հաղորդեց իր այդ որո-
շումը սպասուհիին, որպէսզի մին-
չև վաղն առտու իր ծրարները
կապելով հեռանայ : Խեղճ աղջի-
կը շատ աշխատեցաւ իր անմե-
ղութիւնը հաստատելու համար,
բայց ի գուր :

Ան պարզապէս զս՛ մը պիտի
ըլլար Վարդանի ստախօսութեանը
և չարութեանը :

*
* *

Այդ օրը Վարդան երեսուն
դահեկանի քարեղնդակ կորսնցու-
ցած էր և խոստացեր էր յաջորդ
առաւօտ դրամը վճարել : Իր սրա-
մտութեամբ կը յուսար որ միշտ
իւր գողի արարքները գաղտնի պի-
տի մնային : Դպրոցէն տուն վե-
րադարձին իմացաւ թէ սպասու-
հին հետեւեալ առտուն պիտի
ճամբուի, իբր գող կասկածուե-
լուն պատճառաւ : Մտադրեց
սպասուհիին երթալէն առաջ գո-
ղութիւն մըն ալ ընել, այն մտա-
ծումով թէ՛ այս վերջին գողու-
թիւնն ալ սպասուհիին պի-
տի վերագրուի : Յաջորդ օր վճա-
րելիք պարտք մը ունէր երեսուն
դահեկան, ջանաց իրիկունէ
գործադրել իր ծրագիրը, բայց
հօրը ներկայութենէն վախնալով
որոշեց առտուան թողուլ ծրա-
գրին գործադրութիւնը :

*
* *

Քոյր եղբայր միեւնոյն սենեա-
կին մէջ կը պառկէին :

Առաւօտեան ժամը եօթի մօ-
տերն էր Վարդան անկողնէն ցատ-
կեց ու շտապով հագաւ իր զգեսա-
ները : Իր միտքը զբաղած էր իւր
գողութեան ծրագրով. ուստի իւր
քոյրը չարթնցնելու համար աղ-

մուկ չի հանեց, բայց դուռս ելած
ատեն երբ դուռը բացաւ, դրան
ճրճոցէն յանկարծ նուարդ աչ-
քերը բացաւ: Վարդան, թէև
դժգոհ՝ աճապարեց վար իջնել և
ծնողացը սենեակէն անցած ատեն
տեսաւ որ ծնողքը իրմէ կանուխ
ելեր են: Ուստի անձայն սանդու-
ղէն իջաւ: Նուարդ եղբօրը կա-
նուխ ելլելէն կասկածելով ինքն
ալ որոշեց հագուել ու եղբօրը
հետեւիլ:

Մայրը եւ սպասուհին խոհա-
նոցը կարգի դնելու զբաղած էին:
Իսկ Պ. Երուանդ պարտէզի հաւ-
նոցի վիճակը կը քննէր: Վարդան
օգտուելով այս առիթէն, պատեն
վայրկեան սեպեց անմիջապէս իր
ծրագիրը գործադրել: Անշուկ,
մօտեցաւ դրամի սենեակի դրան,
առանց նկատելու թէ իր բոլոր
շարժումները մեծ ուշադրութեամբ
կը դիտուէին Նուարդին կողմէ:
Այս վերջինը բակ իջնելէ յետոյ,
իսկոյն կծկուեցաւ բարձր սեղա-
նին ետեւ:

Սենեակի դուռը բանալէ ա-
ռաջ, Վարդան կասկածանքով իր
շուրջը նայեցաւ և ո՛չ ոք տես-
նելով, մեծ ուշադրութեամբ դու-
ռը բացաւ և ներս մտաւ: Չտես-
նուելու համար ալ դուռը ներսէն
գոցեց:

Նուարդ իր թաքստոցէն այս
բոլորը ապշութեամբ դիտելէ
վերջը, իր մօր քով վազեց և
տեսածը պատմեց: Մայրը զար-
մացած մնաց, նա չուզեց հաւա-
տալ և իր աղջկան հետ միասին
եկաւ Վարդանի գտնուած սենեակին
առջև: Դրան ծակէն ներսը դի-
տեցին, և ի՞նչ տեսնեն: Վարդան
դարակը բացած, մէջէն իրեն հա-
մար դրամ կ'ընտրէր:

Բոպէ մը չանցած, Վարդան
դուռը բացաւ յաղթականի մը
երեւոյթով, բայց երբ տեսաւ իր
առջև մայրն ու քոյրը, գոյնը նե-
տեց և կեցած տեղը արձանացաւ:

— Ի՞նչ բրիւր ներսը, հարցուց
մայրը խիստ շեշտով մը:

Վարդանի մարմինէն սարսուռ
մ'անցաւ և ամօթէն կարմրած.
գետնին տակ կ'ուզէր անցնիլ:
Փախուստի և ուրացումի ճամբայ
մը չգտնելով ստիպուեցաւ խոս-
տովանիլ թէ քանի մը զրշ. առնելու
համար մտած էր դրամի սենեակը:

Նոյն պահուն հայրը և սպա-
սուհին ալ հասնելով, ապշահար
կը դիտէին եղածը, որ իրենց հա-
մար անակնկալ մըն էր:

— Վարդա՛ն, գոչեց մայրը
բարկութեամբ, խոստովանէ՛ մին-
չև հիմա ըրած գողութիւններդ,
ապա թէ ո՛չ քեզ իմ տղաս չեմ
նկատեր այսուհետև:

Իր հօրը առջև դողացող Վար-
դան, պատմեց իր բոլոր գողու-
թիւնները արտասուելով:


— Ուրեմն յարեց հայրը, այս-
քան գողութիւններէ վերջ ի՞նչու
մինչև հիմա չի խոստովանեցար:
Եւ ի՞նչպէս կը համարձակիս թոյ-
լատել որ մեր հաւատարիմ սպա-
սուհին ճամբու դրուի և թշուա-
ռութեան մատնուի: Դու իրապէս
յանցաւոր ես, նախ որ սուտ խօ-
սեցար և երկրորդ որ սպասուհին
ճամբուելուն առթիւ իսկ չխոս-
տովանեցար քու յանցանքդ: Գո-
ղութիւնը թերութիւն մըն է և
ստախօսութիւնը ամէն տեսակ
չարիքի աղբիւր, հեռացի՛ր
այսուհետև չար ընկերներէ: Մի՛
լար այլևս անիրաւութիւնդ դար-
մանելու համար գնա՛ ներս
խնդրէ սպասուհիէն: Ես կը նե-
րեմ, պայմանաւ որ անգամ մ'ալ
չի կրկնես: Չղջումի անկեղծ ար-
տայայտութիւնը նկարուած էր
տղուն դէմքին վրայ: Մօտեցաւ,
համբուրեց ծնողաց և սպասու-
հին ձեռքերը և ներս մ'իմդրեց,
խոստանալով ո՛չ խնդալ և ո՛չ ալ
գողութիւն ընել. այլ միմիայն իր
դասերուն նուիրուիլ:

ԿԱՐՊԻՍ Ս. ՄՕՐՈՒՔԵԱՆ

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԱՂՋՆԱԿԸ

Ա.— ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ժիւլիէն թէեւ շատ անգամ-ներ Գերմանացիներուն մեկնումի քարի լուրը բերած էր, բայց, այս խիստ ուրախառիթ լուրը իրականացած չէր: Դեռատին Ժիւլիէն այս անգամ սակայն այնքան ար-



Բարի ճանապարհ, բարի ճանապարհ
Պր. Տիւմօլէ

տայայտիչ հրճուանքով կ'աւետէր անոնց մեկնումը և այնքան ման-քաման, որոշ եւ համոզիչ տեղե-կութիւններ կու տար որ մայր Մօրէն կարծես քիչ մը ազդուած աղաղակեց.

«Մարթա՛, Մարթա՛:»

Փոքրիկ աղախինը, որ խուր-ձեր կապելու զբաղած էր, աճա-պարանօք վազելով գնաց մայր Մօրէնի քով: Մարթա արդէն քաւական մեծ, բարձրահասակ, գեղեցիկ և ծանր աշխատութեանց վարժ զօրեղ ձեռքերով աղջիկ մըն էր. Մարթա, գլխարկին տակ իր խռիւ մազերովը, իր խոշոր և

կապոյտ աչքերովը, քիչ մը միա-միտի մը տպաւորութիւնը կը թո-ղուր զինքը դիտողին վրայ:

«Աղջի՛կս, գետնատուն գնա, մայր Մօրէն քեզ կ'արտօնէ, գնա՛ քիչ մը խոզի ճարպ և աման մըն ալ խնձորօղի բեր...»

«Խոզի ճարպէն շատ քիչ կայ, ընդմիջեց Մարթա սահմուկած շեշ-տով մը, և թէ խնձորօղիէն բնաւ մնացած չէ:

«Հոգ չէ, վրայ բերաւ Մայր Մօրէն: Այսօր տօն է: Ժիւլիէն լաւ լուր մը բերաւ քաղաքէն: Գեր-մանները կը հեռանան:

«Ահ, եթէ Գերմանները կը հեռանան, յարեց Մարթա, այդ ուրիշ բան է:

Հինգ վայրկեան յետոյ, մայր Մօրէն Ժիւլիէնէ և Մարթայէ շըր-ջապատուած կը նախադահէր ա-ռօրեայ ճաշին, պարզուկ սեղանի մը որ գրեթէ կէս առ կէս խոր-տակուած էր: Երեքն ալ գետնա-խնձորի գալաճօշին պաշիւ կ'ը-նէին՝ զոր լրացուցիչ խոզին ճար-պը համեմած էր:

Իրենց շրջապատը շատ տխուր էր սակայն:

Մառանին մէջ, որ հազիւ թէ երկու լուսամուտներով և ան-կիւնը դրուած աշտանակով մը կը լուսաւորուէր, կը նշմարուէին, աւերակոյտի վերածուած տունէն հազիւ հազ ազատուած խոհանոցի քանի մը առարկաներ, ինչպէս նաև

պատէն կախուած հազուստներ :

Երբեմն , թնդանօթի խուլ աղմուկներ կու գային եղերել այս արդէն տխրատեսիլ զարդերը : Բայց , շարաթէ մը ի վեր այդ ձայները շատ հազուադէպ կը լսուէին :

Յանկարծ ժիւլիէն , ապա Մարթա , ուշադիր ականջ դրին :

Թնդանօթի ձայն չէր որ լսեցին , այլ ծանր կօշիկներու ցնցող աղմուկներ , հրացանաբուներու քաղխումներ , և վայրագ ու խռպուտ ձայնով մը տրուած հրամաններ :

« Գերմաններն են , աղաղակեցին միասին Մարթա և ժիւլիէն :

« Անոնք կու գան մնաք բարովի վերջին այցելութիւնը տալու , ըսաւ մայր Մօրէն ուսերը թօթուելով : Կրնան մտնել , յափշտակելու համար ինչ որ մնացած է :

Արդարեւ , Գերմաններն էին , որ քանի մը փարսախ հեռուն , 1... քաղաքին մէջ սկսած գործերնին կը շարունակէին : Շատ լաւ կը նահանջէին , բայց գործադրելէ առաջ այս շարժումը , զոր մեծաշուք եղանակով մը « ռազմագիտական նահանջ » կ'անուանէին , ջանադիր կ'ըլլային գործադրելու կանոնաւոր կերպով իրենց կողոպուտի և աւերումի ծրագիրը :

Այդ փոքրիկ գունդը , որ արդէն մասնաւորապէս Սէնթ-Պապի ագարակը , կամ աւելի ճիշդը հոն գտնուող աւերակներուն մէջ ղրկուած էր , խուժեց դէպի մառանը , ուր ագարակապանուհին շրջապատուած ելկու պղտիկներով կը ճաշէր :

Հրամանատար սպան , որ մեծ բիրտ մըն էր , խոժոռ , թէեւ ածիլուած , դէմք մը ունէր : Սպան քաղաքավար արտայայտութիւններով շատ ճիշդ կերպով կը հասէր ֆրանսերէն լեզուն .

« Քանի մը ձեւակերպութիւններ լրացնելու եկայ , ըսաւ սպան մայր Մօրէնի ուղղելով խօսքը :

« Եթէ մեզ կողոպտելու եկաք , պատասխանեց ագարակապանուհին , կէս ծաղրական շեշտով մը , կը կարծեմ որ այդ արշաւէն պիտի կրնանք խոյս տալ : Ահա ինչ որ մեզի թողուցին :

Այս ըսելով մայր Մօրէն , սպային ցոյց տուաւ գործածուած հազուստները , հին պատկերները և խոհանոցի քանի մը առարկաներ :

Գերման սպան բան մը չըսաւ , ուշադրութեամբ իր շուրջը զննեց և հրամայեց իր մարդոց վերցնել և տանիլ խոհանոցի առարկաները :

« Ես ինչո՞վ պիտի պատրաստեմ իմ կերակուրս , ըսաւ մայր Մօրէն բողոքող ձայնով մը : Այդ մանները պղնձէ չեն և բանի մը չեն ծառայեր . անոնք երկաթով և անագով շինուած են :

« Ասոնք մետաղներ են , որոնք կրնան տակաւին ծառայել ֆրանսացիներուն , ընդմիջեց սպան , որչափ որ կարելի է , պիտի օգտուինք այդ մետաղներէն :

Եւ շեշտով մը հրամայեց իրեն մարդոց հնազանդելու :

Այդ պահուն ագարակապանուհին պատուհանէն նշմարեց երկու զինուորներ , որոնք կը սղոցէին կեռասենի մը , այն միակ պտղատու ծառը , որ ընդհանուր աւերումէն հազիւ ազատած էր :

«Ատ ի՞նչ է, պոռաց մայր Մօ-
րէն անհաճոյ շեշտով մը, ինչո՞ւ
կը կտրէք այդ կեռասենին. ինչի՞
պիտի ծառայէ ձեզի :

«Մենք պարտաւոր ենք ջնջե-
լու ամէն ինչ, որ կրնայ դիւրա-
ցնել ներկայիս և ապագային թըշ-
նամիին պարենաւորումը, յայտա-
րարեց սպան ցած ու կտրուկ շեշ-
տով մը : Յետոյ զննելով փոքրիկ
ժիւլիէնը, հրամայեց երթեւեկել
քանի մը անգամներ իր առջեւ,
վստահ ըլլալու համար որ անոր
անկարողութիւնը խաբկանք մը
չէր և գիտնալու համար թէ ան
իրականապէս կաղ էր, ու եզրա-
կացուց մեղմ արհամարհանքով մը .

«Չարժեք անկարողներով մեզ
խճողել :

Սպան այն ատեն հրելով դէպի
առաջ Մարթան, որ իր բոլորովին
միամիտի կապոյտ խոշոր աչքերովը
զինուորները կը դիտէր, հարցուց
ազարակապանուհիին .

«Ձեր աղջիկն է այս :

«Ո՛չ, աղախինս է : Բայց զայն
որդեգրած եմ իմ աղջկանս տեղն է :

«Քանի՞ տարեկան է :

«Տասնհինգ տարեկան չկայ :

«Հուժկու է և տոկուն կ'երե-
ւի, ըսաւ Գերման սպան : Վստահ
եմ որ ան օգտակար պիտի կրնայ
ըլլալ մեզի համար :

Եւ նշան ըրաւ երկու զինուոր-
ներուն, որոնք Մարթայի մօտե-
ցան :

«Ի՛նչ, միթէ աղախինս ինձմէ
առնե՞լ կ'ուզէք, աղաղակեց մայր
Մօրէն, արհամարհոտ շեշտով մը :
Բայց ի՞նչ իրաւունքով : Ըսի ձեզի
արդէն թէ ես զայն որդեգրած
եմ, իմ աղջիկս կը համարուի ան :


Իմ աղջիկս է ան, և իմ աղջիկս
անշուշտ չպիտի տանիք . . . :

Առանց իսկ պատասխան տալ
հաճելու, սպան, ժամացոյցը նա-
յելէ վերջ, ըսաւ իր ամենահաս-
տատ շեշտովը .

«Պատերազմի անհրաժեշտու-
թիւններէն մէկն է օգտուիլ գիտ-
նալ ամէն տեսակ ուժերէ և գոր-
ծունէութիւններէ : Այխատու-
թիւնը զոր պիտի կատարէ այս
աղջիկը, մեզի համար պիտի ըլ-
լայ այնքան շահ, որքան պիտի
ըլլայ վնաս Ֆրանսացիներուն հա-
մար : Մանաւանդ որ անիկա գէշ
վարմունքի ենթակայ չպիտի ըլ-
լայ, չպիտի խոշտանգուի : Ան
մեզի պիտի ծառայէ : Ահա ըլ-
լալիքը :

Յետոյ սպան ազարակապանու-
հիին ուղղելով խօսքը, յարեց .

«Տասը վայրկեան միայն ու-
նիք հրաժեշտի արարողութիւնը
կատարելու և պատրաստելու
միանգամայն անոր ծրարը . տասը
վայրկեան միայն, ոչ աւելի :



Ան մեզի պիտի ծառայէ : Ահա ըլլալիքը

Սպան այս խօսքերէն վերջ
հրամաններ արձակեց իր մարդոց

և անոնց հետ մառանէն դուրս ելաւ :

Մայր Մօրէն նախ բոլորովին ամբողջեցաւ , և յետոյ յանկարծ կարմրեցաւ : Մայր Մօրէն վճռական դիրք մը առաւ , խնձորօղիին ամանը վերցուց հեռացող Գերման սպային գլխուն իջեցնելու համար : Բայց Մարթա , տեսնելով մայր Մօրէնի այդ շարժումը , բռնեց թեւէն և մեղմօրէն ըսաւ .

«Ինծի համար մի մտաւորանջութիք , մայր : Ես գործին մէջէն պիտի կրնամ դուրս ելլել :

Եւ յետոյ աւելցուց ցած ձայնով մը .

«Զանոնք բարկացնելով , անոնց պիտի ներշնչէք ժիւլիէնն ալ իրենց հետ տանելու գաղափարը , վրէժ լուծելու համար :

Այս խօսքին վրայ , մայր Մօրէն թողուց ձեռքի ամանը և անոր գլուխը համբուրեց : Եւ երկու խոշոր արցունքի կայլակներ սահեցան իր աչքերէն :

«Իրաւունք ունիս , աղջիկս , պէտք է անձայն , անշուկ տանջուիլ : Քաջ ըլլալու մեր կերպը այս է , մեզ , խեղճ կիներուս համար , ամենէն պատշաճ եղանակը այս չէ՝ միթէ : Եւ ի վերջոյ պիտի տեսնենք լաւ հետեւանքը բոլոր այս թշուառութեանց : Հիմա ծրարիդ պիտի պատրաստեմ :

Մայր Մօրէն վերստանալով տնայարդարութեան իր եռանդը , կախուած տեղէն վար առաւ աղջկան վերարկուն , պզտիկ հողէ ամանի մը մէջ դրաւ խողի ճարպին մնացորդը , և հոն աւելցուց նաեւ մառանին մէջ ցիրուցան դանդուղ անշուք առարկաներէն

ինչ որ ձեռքը անցաւ , ասեղ , դերձան , քիչ մը ճերմակեղէն , լուսանկար մը Սէնթ-Պաուլի ագարակէն՝ երբ ան ծաղկեալ վիճակ մը ունէր , և խմբանկար մը , իր զաւակով , Մարթայով և Ժիւլիէնով բաղկացած : (Շար.)

ԱՌԱԿԱՆԻ

ԱՌԱԿ-ՔԱՌԵԱԿՆԵՐ



Դասաստան կայ գալիք,
Պասասխան կայ տալիք.
Լաւ կռիւ եւ գործեր,
Աշխարհ կոյր մի՛ կարծեր:



Դրգալով կը ժողովեն,
Շերեփով կուտան.
Հասիկով կը ժողովեն,
Թաքիկով կուտան:



Նախ դուն քեզի օգնէ որ՝
Քեզի Աստուած ալ օգնէ.
Ամեն մարդու՝ ամեն օր՝
ձակասագիրն իր ձեռքն է:



Երկու ժամի լուսարար,
Մեկուն սեւերես.
Երկու տերեր գոհ ընող
Մեկը տեսէ՞ր ես:



Դար վերն ունի՝
Դար վար ալ.
Անհանգիստ ունի
Յարմար ալ:



Երկաթը տաք, տաք
Կը ծեծեն , տրա՛ւ,
Առիթին գիտակ
Պէտք է որ ըլլաս:

ԱՌԱԿԱՆՈՍ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 25

Անցեալ թիւին թիւ 25 բա-
ռեղծուածին մէջ տառադրական
սխալ մը եղած ըլլալուն, մեր
բառեղծուածները լուծողները չէին
յաջողած. ուստի այս անգամ
կրկին կը հրատարակենք:

Կէտերու տեղ տառեր
• • • ծ զեաեղելով կազմել չորս
• • • ռ բառեր, որոնք թէ հո-
• • • ռիզոնական և թէ ուղ-
ծ • • • ղաձիգ կերպով միան-
գամայն կարդացուին:



ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 28

1. Աղած ձուկ նշանա-
կող բառ մը: 2. Ար-
մախքի տեսակ մը: 3.
• • • 0 • • • Կրօնաւորի զգեստ մը:
• • • 0 • • • 4. Հայկական երկրա-
• • • 0 • • • մաս մը որ հարուստ է
• • • 0 • • • բամպակի արտադրու-
• • • 0 • • • թեամբ: 5. Անյաղթ,
• • • 0 • • • անընկճելի նշանակող
• • • 0 • • • բառ մը: 6. Հրապարակի
• • • 0 • • • վրայ ամենալաւ ժա-
մացոյցներէն միոյն ա-
նունը: 7. Փայտ կտրե-
լու դործիք մը: 8. Մե-
տաղ մը:

Ձերօներուն տեղ վերէն վար
կարդալ շատ ծանօթ և ձեզի շատ
մտերիմ մէկու մը ծածկանունը:

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 29

1. Գեանի տակ ճամբայ
նշանակող բառ մը: 2.
Հողի ցցուածք: 3. Ընտանի
• • • 0 • • • կենդանի մը, զոր մեր
• • • 0 • • • տուները կը պահենք: 4.
• • • 0 • • • Բառ մը որ քաջ նշանա-
• • • 0 • • • կէ: 5. Գծի տեսակ մը:
• • • 0 • • • 6. Հայ զօրավար մը որ
• • • 0 • • • մեր պատմութեան մէջ
• • • 0 • • • մատնիչի մը անունը թո-
• • • 0 • • • ղած է: 7. Հայ թագաւոր
• • • 0 • • • մը: 7. Ձուրի ընդարձակ
• • • 0 • • • տարածութիւն մը: 9. Այ-
• • • 0 • • • ծի ձաղը: 10. Հոն, ուր
• • • 0 • • • դպրոցականներ իրենց գր-
• • • 0 • • • քերը կը դնեն: 11. Գոյն
մը: 12. Հայաստանի մէջ
կուսակալութիւն մը: 13.
Տան մէկ մասը նշանակող
բառ մը:

Ձրօներուն տեղ վերէն վար
կարդալով պիտի գտնէք վաղա-
մեռիկ տաղանդաւոր քերթողի մը
անունը, որ «Ակիւտարի Սոխակը»
կոչուած է: Պ. ԶԱՐՈՅԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՔԹ. ՏԻԳՐ. ԵՂԻԿԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թրիսան պէյ խան
թիւ 22

Գիտական խնամք եւ գեղարուեստական
աւննանուրը ճաշակ, կատարեալ ճշդա-
պահութիւն եւ մաքրութիւն:

Տղոց մորթային հիւանդութեանց
դարմանաւուն

ՏՔԹ. Թ. Յ. ՄՁԸԿԵԱՆ ԵՒ

ՏՔԹ. Թ. Գ. ԿՈՍՏԱՆԴ

Մեծ շուկայ, Գալբագճըլար, Պայազիտի
դրան դէմ, թիւ 18:

Թիւ 24 բառեղծուածին լուծումը

Ք ա ն ա կ Ահա հինգ բառեր, որոնք
Ա ն ու ս իրարու տակ դրուելով թէ
ն ո ր ե կ հորիզոնական եւ թէ ուղ-
Աւ ե լ ի ղածիգ կերպով միանգա-
Կ ս կ ի ծ մայն կը կարդացուին:



Թիւ 26 բառեղծուածին պատաս-
խանն է ԼՈՒՐ, որուն տառերը պակսե-
ցնելով եւ ըստ հաճոյս տեղափոխելով
կ'ունենանք շաղկապ մը՝ ՈՒ, խայթող
միջատ մը՝ ԼՈՒ, մակբայ մը՝ ՈՒՐ, կեն-
դանիի ծագ մը՝ ՈՒԼ, թոչուն մը՝ ԼՈՐ,
դերանուն մը՝ ՈՐ:



Թիւ 27 հանելուկին լուծումն է
ԶՐԱՂԱՅՔ



9րդ եւ 10րդ թիւին հանելուկները եւ
բառեղծուածները լուծեցին՝

Պետրոս Զարոյեան՝ 24, 26 եւ 27ր.
Հրանտ Ազիթեան՝ 21, 22, 24, 26 եւ
27ր. Ժիրայր Սագաեան, Խաչիկ Փա-
փազեան՝ 19, 20, 21, 22, 23, 24, 26 եւ
27ր. Արմենակ Մոզեան, Սիմոն Դերջան-
եան՝ 24 եւ 27ր. Յարութիւն Օհանեան,
Ե. Տիրատուրեան, Ասատուր Յովհաննէս-
եան՝ 27ր. Զեփիլո Էնֆիէճեան, Գոհա-
րիկ Տիրատուրեան, Էլիզա Մէրկէրեան,
Վահրամ Խանճեան, Նուարդ Փէշտիմալ-
ճեան՝ 19, 21, 22 եւ 23ր. Գրիգոր Պո-
յաճեան, Յակոբ Ճըրճըրեան, Զարեհ
Կիւմիւշեան, Գեղամ եւ Սաթենիկ Պոյա-
ճեան, Ռեքեկա, Բարսեղ եւ Ֆիմի Ճըր-
ճըրեան, Գրիգոր Գարապաճեան, Շաքէ
Թորոսեան՝ 19, 20, 21, 22 եւ 23ր. Նշան
Գրիգորեան, Վարդանոյշ Իւթիւճեան՝ 19,
20, 21 եւ 23ր. Մելիթոն Ա. Մելիքեան
23 եւ 24ր. Մկրտիչ Եօթնեղբայրեան 22 եւ
23ր. Ալպէր Գափաֆեան, Պ. Եղիազար-
եան՝ 19, 20 եւ 21ր. Սօֆի Մելիքեան՝
19ր. Հերմինէ Պարսամեան՝ 20, 22 եւ
23ր. Ազգանուշ Ալիքսանեան՝ 20 եւ 22ր.
Նուպար Քէրշէեան՝ 19, 21 եւ 23ր. Եղ-
ուարդ Գութալէեան՝ 19, 21, 22 եւ 23ր.
Արտաշէս Պէկեան՝ 21 եւ 23ր. Աննիկ
Նաւարեան, Գոհարիկ Սարրեան, Յակոբ
Սամուէլեան, Ժիրայր Սիմօնեան, Ման-
նիկ Կիւտիկեան՝ 24ր. Հայկ Սարաֆեան,

Սուրէն եւ Մաքրուհի Տէր Գրիգորեան,
Միհրան Պճիկեան՝ 24 եւ 27ր. Արշակ
Տիմիճեան՝ 24, 26 եւ 27ր. Արմենուհի
Տիրիէմսիգեան, Հեղինէ Թօթաթլեան,
Սիրարփէ Քալքըճեան, Տիրուհի Կանանչ-
եան, Տիգրանուհի Գէորգեան, Սիրանոյշ
Տէյիրմէնճեան, Բերուզ Պէրպէրեան 27ր.
Հրանտ Թօփաքեան՝ 19, 20, 21, 22 եւ
23ր. Լուսինէ Կիւլպէնկեան՝ 19 եւ 20ր.
Եղուարդ Զահրէճեան, Աբրահամ Տատըր-
եան՝ 24 եւ 26ր. Տիգրան Գարապօղոս-
եան, Կարապետ Թորոսեան՝ 24ր, Բեթակ
Էսմէրեան՝ 24 եւ 26ր. Արամ Թարագ-
ճեան՝ 24ր:

ԿԱՐԵԻՈՐ.—Խմբագրութիւնս որոշեց
ասկէ վերջ 15 օրը անգամ մը տալ հա-
նելուկի բաժինը, հանելուկները եւ բա-
ռեղծուածները լուծողներուն իրենց պա-
տասխանները հաղորդելու դիւրութիւն
եւ միջոց տալու համար:

ՏԲԹ. ՏԻԳՐԱՆ ԽԱՉԵՐԵԱՆ

Մասնագէտ ներքին, ջղային

Եւ տղայոց հիւանդութեանց
Գումգաբու, Զիֆթէ Կէլին, դեղ. Ա. Ս.
Արսէնեան, թիւ 118 եւ Կէտէկ Փաշա
Նէվիէ ճատտէ, թիւ 73

Կատարեալ լաջողութեամբ կը դարմանէ
ստամոքսի, աղիքներու, սրտի եւ թո-
քերու հիւանդութիւնները, Երկարամեայ
փորձառութեամբ եւ խոր ուսումնասի-
րութեամբ հնարած է մասնաւոր դար-
մանում մը ջղային տկարութեան, լուս-
նոտութեան (սարա) եւ գլխացաւի: Հիմ-
նական դարմանում բոլոր ջղային հի-
ւանդութեանց: Կենսաբանական վերջին
տուիքներու համաձայն կ'արգիլէ ժա-
մանակէ առաջ ծերանալը եւ կը բուժէ
անոր հետեւանքները եղող անկարողու-
թիւնը, ընդհանուր տկարութիւնը եւ ին-
կաճութիւնը: Առողջական վիճակի ման-
րագնին քննութեամբ ապագայ հաւա-
նական ծանր հիւանդութեանց առաջքը
կ'առնէ: Հիւանդագին եւ փափկակազմ
տղաքներու առողջական վատթար վի-
վիճակը կը բարեփոխէ:

Անոնք որ առողջ միտք ունենալ կը փա-
փարին, առողջ մարմին ունենալու են,
հետեւաբար անպայման դիմելու են
վերոգրեալ հասցէին:

Ա. Կ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ժ

ՏԲԹ. Մ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Հասցէ՝ Պահճէ Գաբու, Իքի Բաբուլու
դեղարանը, կէսօրէ վերջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳՎԻԱՌ**

Տարեկան (48 թիւ) 120 Դան.

Վեցամսեայ (24 ») 60 »

ԱՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (48 ») 20 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Առաւօսի հասցէն է՝ Պապը Այի
ճատտէսի, թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:

ՊԻԻՔԱՍԷՔԹԻՆ

BUCCASEPTINE

Այս էլիքսիրը կը յանձնարարուի իբրեւ
ազդու հականեխիչ եւ դարման բերնի
բորբոքումներու, ակռայի ցաւերու, լին-
տերու հիւանդութիւնց եւ բերնի գար-
շահոտութեան, ծայնի մարելուն, ամէն
տեսակ հարբուխներու, չոր հազերու,
ակռաները մարբելու եւ ճերմկցնելու:

ՔՐԷՄ ՍԱՐՔՕՓԹԻՍԻՏ

CRÈME SARCOPTICIDE

Միակ դարման բորոտութեան, որ
երեք օրէն կատարելապէս կը բուժէ
հին եւ նոր բորոտութիւնը:

Այս երկու դեղերուն, որոնց հայթայթիչը
եւ պատրաստողն է Վահան Պէրպէրեան,
կեդրոնատեղին կը գտնուի Պոլիս, Նուրը
Թումանիէ ճատտէսի, Օսմ. Կեդր. Դեղա-
րանը, թիւ 48:

ՀԱՅԿ ՄԱՀՅԱԶԱՃԵԱՆ

ՄԱՔՍՍՅԻՆ ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ներածում եւ արտածում

Կը գնէ նաեւ «սթօք» տպրանքներ
Մահմուտ Փաշա, Քամանթօ խան, թիւ 23

ՏԲԹ. ԱՐԹԻՆ ՊԷՅ ՏԵՎԼԵԹԵԱՆ

Նախկին վիրաբուժապետ Հայտար Փա-
շայի գին. հիւանդանոցին

Գիտական ամենավերջին մէթոտով, դե-
ղերով եւ ներարկումներով քիչ ժամա-
նակի մէջ առանց ցաւի կը բուժէ վեր-
քեր եւ ախտեր: Կը գտնուի ամէն օր
բացի Կիրակիէ, Գարաբէօյ, Ազլ. Փօս-
թին գեմաց Հին Վոյվօտայ թիւ 3

ՏԲԹ. ՆԵՐՍԷՍ ՍԱՆՏԱԼՃԵԱՆ

ՄԱՍՆԱԴԷՏ՝ ականջի, քիթի եւ կոկորդի
հիւանդութեանց

Պահճէ Գարու, Համիտիէ թիւրպէսիի
դէմ: Արիկ Իւթիւճեան դեղարանի վեր-
նայարկը:

ՏԲԹ. Ա. ՍԵՄԵՐՃԵԱՆ

Գումգարու, Պատրիարքարանի կարգը
Հիւանդ կ'ընդունի նաեւ ամէն օր ժամը
3էն 5, Քանթարճըլար, Էվրօքիտի դե-
ղարանը:

ԵՐԿՍԵՌ ՆԱԽԱՆՁԱԽՆԴԻՐՆԵՐ

Մարուր եւ ճաշակաւոր հագուստ ունե-
նալու համար պէտքէ անպայման դիմել

«Հատըվէզ» Ակադեմիայէն վկայեալ

Ս ԼԱ ՄՕՏ ԴԵՐՁԱԿԱՏԱՆ

Հասցէ՝ Ղալաթիա, Վոյվօտայ ճատ-
տէ, թիւ 122, անդլ. նմկան. մօտ:

ԿՕՇԻԿ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ

Պոլիս, Բարմաք գարու, Մաքասճըլար,
թիւ 33 վաճառատան մէջ նոր ժամա-
նած ամերիկեան եւ անգլիական կօշիկ-
ներ սկսան վաճառուիլ, արանց 400,
կանանց 350 եւ տղայոց 300 դրուշէն:
Կը շինուին նաեւ չափու վրայ կօշիկներ,
տոկուն եւ ծեւաւոր:

Բոլոր կարծր առարկաները մար-
բելու եւ փայլեցնելու համար գործածէ

ՊԷՊԻԹՍ ԳԼԻՆՍԸՐ

հանրածանօթ ամերիկեան փոշին

Տպագր. «Առաւօս»